նեալ են նորանոր չինուածս՝ պատկերս եւ կանթեղս 'ի Ս. Յարութիւն, 'ի Բեթղեհէմ և յԱստուածածին, որպէս տումարաւ եւ ստոյգ քննութեամբ ցուցանեն մեզ։ Արդ՝ այն ամենայն զորս արարին, բարձցի և քակեսցի օրինօք դատարանի. ապա թէ ոչ՝ պարտաւորին եւ ՀԱՍԱՆ մեծապէս՝ որք հրաման տան և հակառակին հրամանի մերում։ Յայտնապէս ծանուցաւ որ զտումարն զայն գրեալ են Յոյնք մանրամասն՝ և գրով իւրեանց յղեալ առնա 'ի ձեռն Քաղաքապետին։ Եհարց Դատաւորն ցՅոյնս՝ զի թերեւս գիտութեամբ և յօժարութեամբ նոցին եղեալ իցէ այն ամենայն, բայց նոքա դարձեալ յուրասա եկին, և այնպիսի ձեւ եառուն բանից թէ՝ գործ նոցին տեսանի յԱրքունիս։ Յետ այնորիկ ասէ ցՀայս, չիք իմ արարեալ նորասահման ինչ, այլ ըստ հրովարտակի Արքային և գիտութեամբ ամենեցուն երկու ազգք բաժանորդ եղեն. և թէ՝ չունիմ այժմ հրաման յԱրքայէ քննել զայնս, քակել և կամ այլ ինչ գործել. հարկ է սպասել հասանելոյ Մուվէլլային 'ի Կոստանդինուպոլիս եւ ընդունելոյ զգրեանս. իսկ եթէ Բդեշխն կամի բռնութեամբ գործել, ոչ կարեմ ընդդէմ կալ, թէեւ կարեմ առնել ըստ հրամանի նորին և զամենայն գրեանս առաքել առ Տէրութիւնն, սակայն ըստ օրինաց որքան կարեմ արգելում մինչեւ ծանուցանել ձեզ 'ի Կոստանդինուպոլիս, և բերել գիր հրամանի, զի 'ի յաջորդել այլ Դատաւորի գոլով անտեղեակ իրացս այսոցիկ, հանդիպիցէ նեղութեանց և վնասուց։ Եւ ետ նոցա զպատճէնս գրոց Կուսակալին առաքել առ որ անկն է, և մեկնեցան անտի։ Զկնի երկուց աւուրց դնացին Հայք առ Քաղաքապետն ըստ խնդրելոյ նորին, եւ ընթերցաւ առաջի նոցա զգրեանս Կուսակալին, եւ 'ի լինել բանից 'ի վերայ այսր խնդրոյ, Հայք ետուն պատասխանի՝ Կուսակալն յառաջագոյն գրեալ էր թէ 20 կանթեղ յԱստուածածին, 1 սենեակ 'ի Բեթղեհէմ, և 1 խորան 'ի Ս. Յարութիւն նոր սահմանեալ է, և խնդրէր ծանուցանել ինքեան թէ ո՞ր ազգ 'ի քրիստոնէից արարեալ իցէ զայն, և դուք յայնժամ ո՞րպիսի եղանակաւ ետուք պատասխանի, չէ մեզ յայտ. իսկ այժմ զամենայն ինչ տումարաւ յայտ արարեալ ասէ՝ թէ Հայք 'ի բացակայութեան իմում պատեհ ժամանակ գտեալ՝